

ցանք. որոնց մինչեւ ցարդ պատասխանելը յապաղեցինք, որովհետեւ չկար մէկը որուն վստահութեամբ կարենայինք յանձնել Մեր նամակները՝ քեզի բերելու համար: Յիրաւի մեր հայրագութ սիրոյ աղէք յոյժ խանդավառեցան ու գելան այն բաներէն որ մեզի գրեցիր, եւ որոնք քեզի պատահեցան հազիւ թէ հասած էիր ի Կ. Պոլիս: Սակայն Աստուծոյ՝ Հօրն ողորմութեանց, գոհութիւն կը մատուցանենք, որ զքեզ ամբարշտաց ձեռքերէն սքանչելապէս ազատեց, չարասէրներու խորհուրդները ամօթապարտ րաւ եւ թոյլ տուաւ որ այն որոգայթին մէջ՝ զոր քու ոտքերուդ պատրաստեր էին, իրենք իյնան ու քեզի շնորհաց ընդ փորձութեանն եւ զելսն: Իւր անպատմելի գթութեամբ շնորհէ հիմա որ լաւ օկզննաւորութենէն արդիւնաւորին լաւ արգասիքներ՝ ի փառս իւր Ամենասուրբ անուան եւ ի պատիւ Սրբոյ Կաթողիկէ Եկեղեցւոյ: Եւ յիրաւի մեծ յոյս կը տածենք անոր համար որ, ինչպէս կը գրես, այն որ անիրաւաբար զքեզ կը հալածէր եւ Սուրբ Առաքելական Աթոռոյ կը հակառակէր, վար առնուեցաւ, ու դուն, եպիսկոպոսաց, քահանայից ու ժողովրդեան միաձայն հաւանութեամբ ձեր ազգին Եկեղեցւոյն հոգ առաջնորդ կարգուեցար: Քանզի աստուածային շնորհաց աջակցութեամբ կը յուսանք բազմաբեղուն պտուղներ այն եռանդէն, խոհեմութենէն, վարդապետութենէն, որոյ այնքան պայծառ ու չքնաղ ապացոյցը տուիր՝ երբ մեր քովը մնացիր: Ոյր վասն ամենամեծ